ՆՈՐՔ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
""NORK" SOCIAL SERVICES TECHNOLOGY AND AWARENESS CENTER" FUND

**ԴԵԼՏԱ ԼԼ ՍՊԸ**

**ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԵՆՈՔՅԱՆ**

**(ք. Երևան Լեփսիուսի 41բն39**

**Էլ. փոստ** delta.23@inbox.ru )

18.12.2024թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպված N ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-25/02 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ գնման ընթացակարգ/ շրջանակներում թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ է զբաղեցրել ԴԵԼՏԱ ԼԼ ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

ԴԵԼՏԱ ԼԼ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել էին որոշակի անհամապատասխանություններ. մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /հավելված 1.3/ ներկայացված էր այլ կազմակերպության կայքէջի հղում:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 41-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: ԴԵԼՏԱ ԼԼ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված փաստաթղթերը, և համաձայն կարգի 42-րդ կետի պահանջների, մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Հիմք ընդունելով ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին փվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,»*** ենթակետի պահանջները, ընդունվում է որոշում ***ԴԵԼՏԱ ԼԼ ՍՊԸ***-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՊԱՐՉՅԱՆ

*Կատարող՝ գնումների համակարգող*
*Դ. Մաղոյան, հեռ.+374 93 02 34 01*

Ք. Երևան, Կ. Ուլնեցի 68
68 st. K. Ulnetsi, Yerevan 0001, RA
011 501-508
nork.am / nork@nork.am